

I-101



ՀԱՅԿԱՆԻ

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ

ԹԻՄՈՒՅԵՐԸ ՀԱՅԿԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ
ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ

ԹԻՄ 1 - ՅՈՒՆԻՍ

ՀԱՅԿԱՆԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ

ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ
ԿԱՆՈՆԱԿԱՆ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻ

1855 - ՌՅԴ

ԵՐՇՈՒՐ
ՎԱՍՊՊՈՒՐԱԿԱՆ

ԹՈՒՅԵԱԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԹԵԻՕՔ
ՅԱՐԾՐՈՒՆԻ ԳԱՀԷՆ Ի ՎԱՆՏՈՍՊ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ,
ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՄԿՏԻՉ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԽՐԸՄԵԱՆ ՎԱՆԵՑԻՈՅ
ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՐԻՑ ԵՂԲԱՐՅ ԱՐԱՊԵԱՆ

1855 = ՌՅԴ

1875-1876

1876-1877

1877-1878

1878-1879

1879-1880

1880-1881

1881-1882

1882-1883

1883-1884

1884-1885

ՅԵՅՏԵՐԵՐՈՒԹԻՒՆ

Երբան եւ վայելուչ է զանուն գարուս այսմիկ՝ լուսանորոգ անուամբ պատուել եւ պսակել գովութեամբ. յորում ըղձալի լոյսն ուսումնասիրութեան ցոլանայ յամենայն ուրեք եւ տակաւ տակաւ ծաւալի ընդ բոլոր տեղիս, գոգ թէ արեւու նման զհամայն աշխարհաւ սփռել ունի զիւր շառաւիղս. յորմէ խաղառ ՚ի բաց փարատելոց է խաւարապատ գիշեր պարսաւելի տգիտութեան :

Տեսանեմք աւասիկ , զի աչք ամենեցուն հայիլ սիրեն յիմաստութեան ճրագն եւ զճաճանչօք նորին թուչին մտօք եւ մերձենան . իբրու զթիթեռն այն կենդանին՝ յաւեօ իմն անձկանօք փափագին եւ խայտան առ նշուլիւք նորին :

Տեսանեմք , զի բազմաց բերանք սովորեցան զիմաստութենէ խօսիլ , ըզպիտանութիւն , շահ եւ զօգուտ նորին յամենայն ականջս հռչակել : Տեսանեմք մանաւանդ . զի յորով մատուցեք եւ գրիչք վաստակին անձանձիք զտիւ եւ գիշեր , աշխատասէր միջնոյն նմանեալ ժողովեն , համբարեն , պատրաստեն զհատիկս պատուական գրոց ՚ի պէտս կարօտեալ մանկտւոյն , որ բերանաբաց լեալ հաց գիտութեան խնդրին . իսկուհի զմեծամեծ համբարս պէսպէս հարուստ մատենից . զորս հանձարեղ հեղինակք յօրինեալ են ցարդ եւ յօրինել ունին անխոնջ երկասիրութեամբ . ահա եւ շատք եւս բուռն հարեալ են զշաբաթական լրագրաց եւ զամսաթերթից հրատարակել՝ ազգասէր ոգւով ջանասիրեալ . որք յիրաւի յորով շահս քաղաքական եւ ազգային կրթութեան ընծայեցին հայկասեռ ժողովրդոց . ոչ միայն զուսման փափագ եւ տենչ յաւելին ՚ի սիրտս մանկտւոյն . այլ եւ զհուր սիրոյ հայրենեաց եւ ազգին՝ բորբոքեալ արկին յոգիս ամենեցուն . որով աղաղակ բարձեալ գոչեմք հառաչանօք , Հայաստան՝ Հայաստան :

Այս գովելի հրատարակիչք , որ հեռի կան ՚ի բնիկ հայրենի ծոցոյն . այսպիսի եռանդուն սիրով վառեալք զՀայաստան աշխարհին մերոյ զվաղեմք փառաց եւ պարծանաց գրեն երգեն եւ հռչակ հարկանեն զնմանէ յամենայն ազգասէր ականջս : Իսկ ինձ , որ ՚ի գիրկս հայրենի կամ (թէ եւ առայժմ՝ վասն նորին ՚ի պանդխտութիւն ելեալ) , քանի՞ առաւել պարտ է եւ վայելուչ գրել եւ խօսիլ զհայրենեացն , զնորին նախնի ճոխ բարդաւաճութեանցն , զվերջին դժբախտ վիճակացն , զհայրենաշէն քաջացն Հայոց , զառաքինի Հարցն հոգեւոր եւ որ ինչ առ հայրենիսն վերաբերին : Շրջեալ յածեալ ՚ի Հայաստանեսոյց վայր , ժողովել յօգել զծաղիկս պէսպէս եւ

բարձեալ 'ի վերայ նորաբոյս թեոց Արծուիս Վասպուրականի՝ թուռցա-
նել առ հայկասերունդ մանկտին: որոց սիրաբար նուիրեալ՝ հոտոտեսցին, առ-
ցեն զանուշակ զգացմունս հայրենաբոյս ծաղկանցս: Ի նիւթս դուզնաբեայ
թերթիս՝ ոչ համարձակիմք իբրեւ զբազմալեպ հանդիսանալ՝ գրելով 'ի վե-
րայ բազմատեսակ նիւթոց. այլ ըստ չափու կարեացս եւ ըստ նպատակի մե-
րում՝ միայն հայրենալեպ լինել կամիմ. եւ մանաւանդ գրել որ ինչ պիտա-
նի թուին 'ի բանասիրական, բարոյական եւ դաստիարակութեան մասին:
'Ահ եւ սիրելի է ինձ, եւս առաւել սովորութեանս, յաւէտ անդրանիկ եւ նա-
խաբարբառ լեզուաւ գրել: Եւ այսու ըզձալի կամիմ առնել զայս նուէր՝
դպրոցական ուսումնատենչիկ պատանեկաց. որոց, գիտեմ, առաւել քաղցր է
համեղ ճաշակ հայրենի ճոխագոյն լեզուին. զոր 'ի ստանալ՝ վաստակասէր
ճգնութեամբ դեգերին հանապազ առ դրունս դպրոցաց: Սակայն ըստ պա-
հանջման նիւթոյն՝ բազում ուրեք եւ աշխարհիկ լեզուաւ գրել ոչ անդէպ
վարկանիմք: Իսկ որ իրաւացի պատճառ առ այս բերեն, իբր թէ այժմեան
ուսումնական վիճակ Հայոց դեռ տղայ է չկարէ ճաշակել զհաստատուն կե-
րակութիւն գրաբառ լեզուին մերում. ուստի բազումք անձաշակ մնացեալ
չօգտին եւ չհասնին ինչ: Ըստ այս ունիմք առանձին յօդուածով պատասխան
յառաջին թիւ թերթիս գրելով ըստ կարծեաց մերում 'ի վերայ գրաբառ
եւ աշխարհիկ լեզուին:

Ի նկալարուք ուրեմն, ով դուք համօրէն կաճառք հայրենասիրաց եւ
հանճարասէր մանկունք Հայոց զՀրաւիրակիս Արարատեան զերրակի նուէր
փոքրիկ թերթիս, զոր 'ի սիրաբոյս ծաղկոց է սրտիս քաղեալ, եւ կապեալ 'ի
փունջ յամենայն ամսոջ՝ ընծայեմ սիրողացդ բանի 'ի ձեռն նորաթեւիկ
Արծուիս:



ՆՈՒՅՐ ՆԱԽԱՅՅՐԵԱՑ
ԱՐԾՈՒՅՆ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՆԷ

Թռի՛ր Արծուիդ իմ աւափի նորափետուր զարդարելով .
Յարուցեա՛լ ՚ի նորահրաշ շրմէդ զօրէն Արծուոյն անմահ .
Թռի՛ր ՚իլերանցըն Վարազայ, ուր զրոյն եղեր բարձր ՚ի վի մի .
Առ թեւօք խաչին հանգէր յեցեալ ՚ի վայտն ապաստանի .
Ա՛նդ սիրեր նըստիլ ՚ի թուխս ժշով լով զճուռն . ՚իւօրդ .
Տածելով զնոնն անդէն ջերմիկ ոգւովդ հայրադուէ ,
Մինչեւ ՚ի ձուռն էլեալ արտաքս թռչիցին ճեաք Արծուոյդ ըզհեա ,
Ճախրացիր արագաթեւ հաս ՚ի քաղաքն Բիւզանդիոն ,
Տո՛ւր ողջոյն եւ աւետիս բո սրեւեալըն հայկազուն .
Ասա թէ Արծուինըն ձեր զերթ զփունիկ հրաշանորդ ,
Եւ եւ թռեաւ առ ձեզ յանկարծ նոր յառնելով առ ՚ի մոխրոյն .
Էռէք արդ , ով ազգասէրք դոյզն այս նրուէր նախախայրեացս ,
Քաղցր ՚ի բիմս ծնչակեցէք , առ որ կարօտ մնայիք յաւերթ .
Բա՛ւ դուք զայս համարեալք մինչեւ Արծուին Վասպուրակ ան ,
Ընդ Ադրիլ ամսոյն բուսցի ընդ Վարազայ լերանց ծաղկանց
Զփունջ վարդից կարմիր թերթից կապեալ ՚ի թեւը իւր հասնի ,
Զօնեցէ որ ախորժեն հոտով լընուլ ՚ի հայրենեաց :

՚ի 1857 . ՄԱՐՏ 25
՚ի ՆՈՐ ՏՊԱՐԱՆԻ ԱՐԾՈՒՅՆ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԻՎԱՆ ՏՈՍՊ ՎԱՐԱԳ

ՄԿՏԻԶ ՎԱՐԷԱՊԵՏ
ԽՐԻՍՏԻ